

**ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/3

10 հունիսի 2014 թ.

Քննարկվեց «Հայր և որդի Անանյաններ» ՍՊԸ 28.04.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 16.04.2014 թ-ի թիվ 2129375 ստուգման ակտի դեմ:

«Հայր և որդի Անանյաններ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիր ՀՏ պետի 01 ապրիլի 2014 թ-ի թիվ 2129375 հանձնարարագրի հիման վրա «Հայր և որդի Անանյաններ» ՍՊԸ-ում /այսուհետ՝ Ընկերություն/ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցները կատարել են օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում, որի հետ կապված 16.04.2014 թ-ին կազմվել է թիվ 2129375 ակտը:

Ակտի 1-ին կետով պարզվել է, որ Ընկերությունը իրականացնում է ատամնարտժական ծառայությունների մատուցման գործունեություն 2 աշխատատեղով, որը համարվում է «Արտոնագրային վճարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հավելվածով սահմանված գործունեություն և ապրիլ ամսվա համար չի ստացել արտոնագիր: Ասկայն Ընկերությունը, մինչև գործունեության շարունակելը օրենքով սահմանված կարգով կատարել է արտոնագրային վճարումը (կից ներկայացվում է վճարմար անդորրագրի պատճենը) և փոստային ծառայության միջոցով ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացրել արտոնագրային հայտարարությունը (կից ներկայացվում է փոստային կտրոնի պատճենը): Ընդ որում, մինչև վճարում կատարելը և արտոնագրային հայտարարություն ներկայացնելը ստուգող մարմնի կողմից չի արձանագրվել գործունեության իրականացում:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 6-րդ կետի համաձայն, հայտարարություն ներկայացնելու օրն անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը ստանում է արտոնագիր սույն հավելվածի թիվ 2 ձևին համապատասխան: Ընդ որում, հայտարարությունը ներկայացնելու օրվա ընթացքում սույն հավելվածի թիվ 2 ձևով արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված՝ հայտարարությունը ներկայացնելու օրը, եթե անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը, սույն հավելվածի 16-րդ կետին համապատասխան կատարել է արտոնագրային վճարի վճարում: Այսինքն, ընկերությունը գործունեություն իրականացրել է արտոնագիր ստանալուց հետո:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ կողմից կազմված ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիր ՀՏ պետի 01.04.2014 թ-ի թիվ 2129375 հանձնարարագրի համաձայն «Հայր և որդի Անանյաններ» ՍՊԸ-ում կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների

ճշտության ստուգում: Արդյունքում, կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիր ՀՏ 16.04.2014 թ-ի թիվ 2129375 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 720.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես աճանագրվել է.

«Հայր և որդի Անանյաններ» ՍՊԸ-ն ք.Երևան, Կոմիտաս 59/6-1 հասցեում իրականացնում է ատամնաբուժական ծառայությունների մատուցման գործունեություն երկու աշխատատեղով /ատամնաբուժական բազկայթող/, որը համարվում է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 7 հավելվածով սահմանված գործունեություն և ապրիլ ամսվա համար չի ստացել արտոնագիր: «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 7 կետի համաձայն իրավաբանական անձի կամ Ա/Ձ-ի կողմից առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում սույն օրենքի 7 հավելվածում նշված գործունեության տեսակով զբաղվելու դեպքում իրավաբանական անձից կամ Ա/Ձ-ից գանձվում է տուգանք՝ 720.000 դրամ /60000x2x2x3 ամիս/, առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանկահատվածի /բայց ոչ պակաս 3 ամսվա համար/ սույն օրենքի 8-րդ հավելվածով սահմանված կարգով հաշվարկված՝ վճարման ենթակա արտոնագրային վճարի կրկնակի չափով: Այսպիսով, ընդամենը ենթակա է բյուջե վճարման 720.000 դրամ:

«Հայր և որդի Անանյաններ» ՍՊԸ գանգատին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ հետևյալ եզրակացության:

Համաձայն 01.04.2014 թ-ի անդորրագրի «Հայր և որդի Անանյաններ» ՍՊԸ կողմից 01.04.2014 թ-ին, ժամը 14:32-ին վճարվել է ատամնաբուժական գործունեություն իրականացնելու համար նախատեսված արտոնագրային վճարը՝ գումարով է 120.000 դրամ: Ընկերության պնդմամբ նույն օրը, ժամը 14:00-ի սահմաններում փոստային ծառայության միջոցով ՀՀ ԿԱ ՊԵԿ է ուղարկվել նաև արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունը և որպես նշվածի հիմնավորում գանգատին կից ներկայացված է փոստային առաքումը հիմնավորող կտրոնի պատճենը:

Քննարկման ընթացքում Ընկերության ներկայացուցիչը պնդեց, որ մինչև արտոնագրային վճարի վճարելը և հայտարարության ներկայացնելը «Հայր և որդի Անանյաններ» ՍՊԸ կողմից որևէ հաճախորդի ծառայություն չի մատուցվել:

«Հայր և որդի Անանյաններ» ՍՊԸ կողմից ներկայացված վերոգրյալ ապացույցների իսկությունը պարզելու նպատակով ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից իրականացվել են համապատասխան գործողություններ: Մասնավորապես պարզվել է, որ ընկերության կողմից ներկայացված այն ապացույցը, որի համաձայն փոստային ծառայության միջոցով արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունը ուղարկվել է ժամը 14:00-ի սահմաններում, չի համապատասխանում իրականությանը, քանի որ ընկերության կողմից որպես ապացույց ներկայացված փոստային ծառայության կտրոնով համապատասխան նամակն, որով ուղարկվել է վերոգրյալ հայտարարությունը, առաքվել է ոչ թե ժամը 14:00-ի սահմաններում, այլ՝ ժամը 18:07-ին: Ընդ որում, գործում առկա են «Հայր և որդի Անանյաններ» ՍՊԸ աշխատակիցների (բժիշկների) կողմից տված բացատրություններն այն մասին, որ ժամը 15:30-ից մինչև 16:00 սահմաններում ընկերության կողմից մատուցվել են ատամնաբուժական ծառայություններ: Ըստ նշված

բացատրությունների, ստուգումն իրականացնող Արաբկիրի ՀՏ աշխատակիցներն ընկերություն են այցելել ժամը 15:30-ից մինչև 16:00 սահմաններում, երբ հաճախորդներին մատուցվում էին ատամնաբուժական ծառայություններ:

Վերոգրյալ փաստական հանգամանքներն ապացուցում են այն փաստը, որ ընկերության կողմից մինչև արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն ներկայացնելը փաստացի իրականացվել է գործունեություն:

Քննարկվող դեպքում ընկերության կողմից խախտվել են «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 5-րդ կետի պահանջները, որի համաձայն. «Արտոնագրային վճար վճարողները մինչև գործունեություն իրականացնելը, իսկ գործունեության տվյալ տեսակի համար համապատասխան արտոնագիր ունեցող անձինք՝ մինչև նախկին արտոնագրով նախատեսված ժամանակահատվածից հետո գործունեության տվյալ տեսակը շարունակելը որևէ ժամանակահատվածի (օրացուցային տարվա ընթացքում ընտրված ցանկացած ամիս կամ հաջորդական ամիսների հանրագումար, բայց ոչ ավելի, քան մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը) համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն հավելվածի N 1 ձևով սահմանված հայտարարություն»:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ու մ է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ